ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 45

10 ապրիլի 2013 թվական

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՀՐ. ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ 316 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ԿԱՅԱՆԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՆՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 32 հոդվածի 17 կետի և հիմք ընդունելով Մարալիկ համայնքի ավագանու 15 օգոստոսի 2012 թվականի N 43 որոշումը, Մարալիկի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի 10 ապրիլի 2013 թվականի թիվ 1ա որոշումը

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարալիկ քաղաքի Հր. Շահինյան փողոցի թիվ 316 հասցեում գտնվող լիցքավորման կայանը աճուրդային եղանակով 308000 (երեք հարյուր ութ հազար) դրամ առավելագույն արժեքով վաճառքում հաղթող ճանաչել Վարդան Հարությունյանին և այդ լիցքավորման կայանի նկատմամբ ճանաչել նրա սեփականության իրավունքը:
2. Լիցքավորման կայանի զբաղեցրած 0.07 հա զբաղեցրած տարածքը ճանաչել Վարդան Հարությունյանի սեփականությունը՝ վճարելով հողի կադաստրային արժեքը 369600 (երեք հարյուր վաթսունինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:
3. Վարդան Հարությունյանի հետ օրենքով նախատեսված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 46

10 ապրիլի 2013 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ (ԾԱԾԿԱԳՐԵՐ 1.2-1, 1.3-1, 2.1-2, 2.3-1, 2.3-2, 2.3-3, 2.3-4, 2.3-5, 2.3-6, 3.2-1, 3.2-3, 3.2-4) ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի հանձնարարությունը՝ <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությունների վերաբերյալ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության (1.2-1, 1.3-1,2.1-2, 2.3-1, 2.3-2, 2.3-3, 2.3-4, 2.3-5, 2.3-6, 3.2-1, 3.2-3, 3.2-4 ) պաշտոնների անձնագրերը համաձայն 1-1-2 հավելվածների:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնքի ղեկավարի 2012 թվականի հունիսի 11-ի <<Մարալիկ քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության (ծածկագրեր 1.2-1, 1.3-1, 2.3-1, 2.3-2, 2.3-3, 2.3-4, 2.3-5, 2.3-6, 3.2-1, 3.2-3, 3.2-4) պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին>> թիվ 82.3 որոշումը և Մարալիկ համայնքի ղեկավարի 2012 թվականի նոյեմբերի 14-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի /ծածկագիր 2.1-1/ համայնքային ծառայողի պաշտոնի անձնագիրը հաստատելու մասին >> թիվ 167-Ա որոշումը :

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 47

10 ապրիլի 2013 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՖԵՐԴԻՆԱՆՏ ՀԱԿՈԲԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Մարալիկ քաղաքի Մադաթյան փողոցի N 9 շենքի 12 բնակարանի բնակիչ Ֆերդինանտ Հակոբի Ղազարյանի դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ 22 դեկտեմբերի 1997 թվականի Մարալիկի քաղաքապետի թիվ 103 որոշման համաձայն Մարալիկ քաղաքի Նոր թաղամասի N 5-րդ փողոցի հարևանությամբ գտնվող թիվ 141 կիսակառույց նկուղը հատկացվել է Ֆերդինանտ Հակոբի Ղազարյանին, 2012 թվականին կառուցել է բնակելի տուն և միաժամանակ հատկացվել է 0.05 հա հողամաս, ուստի ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության 37 հոդվածի դրույթներով <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի դրույթներով ***որոշում եմ***

1. Ճանաչել Մարալիկ քաղաքի բնակիչ Ֆերդինանտ Հակոբի Ղազարյանի /ծնված 20.06.1952թ./, ըստ քաղաքի գլխավոր հատակագծի հատկացված 0.05 հա հողամասի և <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի վերաբերյալ>>, Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն 0.05 հա հողամասի սեփականության իրավունքը, որը չի ընդգրկում <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածի դրույթները:
2. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել Անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցում կատարելու նպատակով:

**Քաղաքապետ՝** **ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 48

10 ապրիլի 2013 թվականի

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՖԵՐԴԻՆԱՆՏ ՀԱԿՈԲԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 25-ի N 2387-Ն որոշմամբ՝ Մարալիկ քաղաքի բնակիչ Ֆերդինանտ Հակոբի Ղազարյանին պատկանող անհատական բնակելի տունը հասցեավորելու նպատակով ***որոշում եմ***

Մարալիկ քաղաքի բնակիչ Ֆերդինանտ Հակոբի Ղազարյանին պատկանող անհատական բնակելի տունը հասցեավորել ք. Մարալիկ Նոր թաղամաս 5-րդ փողոց տուն 141:

**Քաղաքապետ՝** ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 __ թ. _____ ____
ք.Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 49

10 ապրիլի 2013 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետ՝ության օրենքի 33 հոդվածի 3-րդ կետով ***որոշում եմ***

1. 09.1.1.51 (նախադպրոցական հիմնարկի պահպանման ծախսեր) գործառական դասակարգման 4267 (կենցաղային և հանրային սննդի նյութեր) հոդվածի 2700000 (երկու միլիոն յոթ հարյուր հազար) թիվը փոխարինել 2300000 (երկու միլիոն երեք հարյուր տաս հազար) թվով, 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի 350000 (երեք հարյուր հիսուն հազար) թիվը փոխարինել 750000 (յոթ հարյուր հիսուն հազար) թվով:
2. Գլխավոր մասնագետ հաշվապահ Ա. Սաղաթելյանին.

   Նախահաշիվների և ժամանակացույցների մեջ կատարել նշված փոփոխությունները:

**Քաղաքապետ՝** ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 __ թ. _____ ____
ք.Մարալիկ